

ԷԿՈԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՈԳՍԵՐՈՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱՍԻՋԱՎԱՅՐՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ԱՂԻԼԽԱՆՅԱՆ^{ID}, ԶԱՐԻԿ ԱՂԱԶՆՅԱՆ^{ID}

Երևանի պետական համալսարան

Հոդվածում, օգտագործելով **Էկոլեզվաբանության** (նաև **լեզվաապագայաբանության**) ընձեռած հնարավորությունները, փորձել ենք միջազգային չափանիշներին համապատասխան ներկայացնել Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի լեզվամիջավայրերը՝ որպես **մարդ - բնություն - լեզու** էկոհամակարգի բաղադրիչ, և քաղաքակիրթ աշխարհին ներկայացնել հայերենի առանձնահատկություններն ու «հոգսերը»՝ «հայերենի», թե՛ հայության հիմնախնդիրներ» համատեքստում:

Հոդվածի շարադրման ընթացքում նպատակային ենք դարձրել իբրև ուսումնասիրության ելակետ ընդունել գործառական դժվարություններ ունեցող, խնդրահարույց, լեզվակրթական միջավայրի, խոսքի մշակութականացման գործընթացի վրա բացասաբար ազդող արտաքին և ներքին գործոնների, քաղաքական և սոցիալական վտանգավոր շերտերի վերլուծությունը և արձանագրել Էկոլեզվաբանությունները:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ հանգել ենք այն եզրակացության, որ ՀՀ լեզվամիջավայրում հայերենի գործառության շրջանակներն ընդլայնվել են, և **այսօր** հայերենի մաքրության և պահպանության աստիճանը որոշվում է «**Էկո**» համախմբով: Վերջնարդյունքային կարգախոսն այն է, որ **արտաքին աշխարհի և հայկական համայնքներ ունեցող բազմաթիվ երկրների հետ ՀՀ-ի հարաբերությունների կարգավորման հիմնական գործիքներից մեկը լեզվական-մշակութային բաղադրիչն է:**

Բանալի բառեր – *մարդ-բնություն-լեզու էկոհամակարգ, ՀՀ լեզվական միջավայր, էկոլեզվաբանություն, էկոխոսույթ, բազմալեզվություն, միջմշակութային երկխոս*

* **Անահիտ Աղիլխանյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Анаит Адилханян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ

Anahit Adilkhanyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ adilkhanyanahit@ysu.am <https://orcid.org/0009-0006-0917-4586>

** **Զարիկ Աղաջանյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Зарик Агаджанян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ

Zarik Aghajanyan – PhD in Philology, Associate Professor at YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ aghajanyanzarik@ysu.am <https://orcid.org/0009-0002-6573-3777>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.09.2025

Գրախոսվել է՝ 14.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

ություն, ընկերակցվաբանություն, քննադատական խոսույթ, էկոլեզվաբանական հոգսեր, լեզվի փոփոխականներ

21-րդ դարում **մարդ – հասարակություն – բնություն – լեզու – միջավայր** էկոհամակարգերի փոխներգործուն շղթայում լեզուն վերածվել է անփոխարինելի բաղադրիչի: Այն ներքին և արտաքին աշխարհների փոխհարաբերությունների, միջմշակութային հաղորդակցության, հասարակության կենսագործունեության բնական միջավայրի և լեզվամիջավայրի փոխկապվածության նշանաձողն է:

Նորդարյա մարտահրավերների թելադրանքով լեզվի գործառույթային համակարգման նոր հայեցակարգ մշակվեց, ինչի արդյունքում մարդակենտրոն գիտահամակարգում ձևավորվեց լեզվաբանական նոր գիտաճյուղ՝ **էկոլեզվաբանությունը (լեզվի էկոլոգիա կամ էկոլոգիական լեզվաբանություն)**¹: Բազմալեզվության և մշակութային բազմազանության հողի վրա ստեղծվեցին ընդհանուր լեզվաքաղաքականության հարցերով զբաղվող կառույցներ, ինչպես օրինակ՝ **Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնը** (1994 թ., Ավստրիա), որը մշակում-իրականացնում է միջմշակութային իրազեկման և դարի մարտահրավերներին արձագանքելու՝ զարգացման և միջնորդական ծրագրեր, ծանոթացնում է եվրոպական ընդհանուր լեզվաքաղաքականության դրույթներին, ազգային առանձնահատկությունների վրա խարսխված արժեքներին, օգնում է՝ ապահովելու ազգային լեզվական կրթության համապատասխանությունը միջազգային չափանիշներին և այլն²: Գործում է նաև «**Էկոլեզվաբանության միջազգային խորհուրդը**»՝ խարսխված հատկապես էկոլեզվաբանական քննադատական խոսույթի վրա: Լեզվին և լեզվագործածությանը վերաբերող խնդրահարույց հարցերով շարունակեցին զբաղվել ակադեմիական շատ հաստատություններ և հանրային-հասարակական ծառայություններ, ինչպես օրինակ՝ Ֆրանսիական ակադեմիան, «Служба русского языка» ինստիտուտը և նրան կից **gramota.ru** հարթակը ՌԴ-ում և այլն: Էկոլեզվաբանական գործառույթներ է ստանձնել նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ ի նպաստ լեզուների ճանաչման և գործածության աջակցման:

Էկոլեզվաբանական տարրերը հայ լեզվաբանության մեջ: Դարեր ի վեր հայ լեզվաբանների ուշադրության կենտրոնում առանց «**էկոլեզվաբանություն**» անվանման մշտապես շրջանառվել են **լեզվի / խոսքի** կանոնարկման և մշակութականացման, պաշտպանության-պահպանության և փոխանցման, ազգային լեզվի և օտար լեզուների **փոխկապակցվածությունների, փոխկախ-**

¹ Տե՛ս **Ադիլխանյան Ա., Աղաջանյան Զ.**, Էկոլեզվաբանությունը գիտական լեզվաշինության և ազգաշահ լեզվաքաղաքականության հիմքում // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2025, 2, էջ 52-63:

² Տե՛ս **Եղիազարյան Գ.**, Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի լեզվաքաղաքականությունը // Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, 2004, 1(68), էջ 248-261:

վածությունների և փոխադեցությունների ուսումնասիրության, «լեզվի փոփոխիչների» կամ «լեզվաէկոլոգիական փոփոխականներ»-ի, բնության խորհրդի և լեզվի խորհրդի համաբանության և նմանատիպ շատ հարցեր: Ի հաստատումն ասվածի՝ վկայակոչենք Ա. Այտընյանին. **լեզվի խորհուրդն էլ բնության խորհուրդն ունի**. «Մնանիլ, ապրիլ, իւր նմանը յառաջ բերել եւ մեռնիլ, ասոնք են մարդկութեան եւ անոր շատ իրողութեանցն էական վայրկեանները: Մարդկային խոսողութեան գործիքը՝ լեզուն, ան ալ հարկաւ այս չորեքպատիկ անցքերէն կանցնի»³: Խիստ արդիական է Մխիթարյան միաբանության վարդապետ-լեզվաբանի՝ այն ժամանակ դեռևս «էկո» չանվանվող լեզվամտածողությունը: Նա լեզվի մահացման հիմնական պատճառը համարել է զգործածվելը, լեզվի փոփոխության գլխավոր մղիչը՝ **«մտաց» զարգացումը** կամ **նորանոր «գաղափարաց պէսպէսությունը»**, իսկ լեզվի գլխավոր «այլալիչներից» առանձնացրել է **քաղաքական իշխանությունը, կրոնը, գիրքը, վարքութարքը, կենցաղային, բարոյական արժեքները, նաև՝ պատմական դիրքը, քաղաքական անցքերը, տարածական հեռավորությունը, այլալեզու օտարների մեջ հայտնվելը, մայր ազգի մարմնից զանգված առ զանգված անջատվելն ու վայրիվերո ցիրուցան լինելը (Մեծ գաղթ)** և այլն: Մահացող և մահացած լեզուների խնդրին անդրադառնալիս (դասական գրաբարի օրինակով) **լեզուն մահացման չհասնելու** խորհուրդով էկոաշխատանքների չափ է սահմանել՝ **պետք չէ «մեռելահանությամբ» զբաղվել:**

Մյուս կողմից՝ հայերենի զարգացման տարբեր շրջաններում տերմինահամակարգում շարունակաբար ներմուծվել են «էկո իմաստատարներ» ներակայող բազմաթիվ եզրույթներ (լեզվամտածողություն, լեզվական մաքրամոլություն, լեզվամիջավայրի աղտոտում, լեզվական օրենսդրություն, լեզվի եղծում, լեզվի աղճատում, լեզվական թափթփվածություն, լեզվի կաղապարայնացում, լեզուների խառնում, լեզվական վթարներ, լեզվական դաստիարակություն և այլն):

Պարբերաբար հրապարակի վրա են հայտնվել լեզվագործածության ճիշտն ու սխալը մատնանշող, հայերենի գործառական միջավայրը մաքրելուն և մաքուր պահելուն, հայերենի «հոգսերը» հոգալուն նպատակամիտված գրքույկներ, ուղեցույցներ, բառարաններ և այլն:

Հայ էկոլեզվաբանություն: Տրամաբանական էր, որ **էկոլեզվաբանությունը** պետք է դառնար նաև հայ լեզվաբանության բաղկացուցիչը: ՀՀ լեզվաբանությունը որդեգրեց միջազգային դասական լեզվաբանության տեսական հիմնադրույթները, ազգային լեզվաբանական տերմինահամակարգը (բառամթերանոցը) համալրեց փոխաբերականացման ճանապարհով **էկոլոգիական / լեզվաբանական** համանունական գործառությամբ հատկանշվող միավորներով, անուն տվեց լեզվամտածողության նոր տեսակին՝ **հայ էկոլեզվամտածողութ-**

³ **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 31:

յուն կամ **հայոց ազգային լեզվամտածողության էկոլոգիա**: Այսօր լայն քայլերով փորձում է ազգայնացնել նաև նորագույն գիտության գործնական ձեռքբերումները և անդամակցել միջազգային կառույցներին:

Հայոց լեզվի զարգացման արդի շրջանում հստակեցվում են հայ էկոլեզվաբանության ուսումնասիրության առարկան, խնդիրներն ու նպատակները, լեզվամիավորների գծային հաջորդականության շղթայում վերջինիս նվազագույն միավորի՝ **էկոխոսույթ**-ի տեղն ու դերը:

Հայ էկոլեզվաբանության ուսումնասիրության առարկան հայերենն է՝ ուսումնասիրության նեղ ու լայն հայեցակարգերով: Նեղ առումով էկոլեզվաբանությունը սահմանվում է իբրև լեզվի և խոսքի մշակույթի բնագավառում լեզվաբանական հետազոտությունների ուղղություն, որի ուսումնասիրության ելակետը գործառական դժվարություններ ունեցող, խնդրահարույց, լուսաբանման կարոտ լեզվամիավորներն են, խոսքային գործունեության վրա բացասաբար ազդող արտաքին և ներքին գործոնների և դրանց հետևանքների, նաև հանրակրթական, տեղեկատվական, լեզվաքարոզչական, լեզվաշինական, լեզվաօրենսդրական, լեզվաքաղաքական էկոխոսույթների վերլուծությունն ու քննադատությունը, տվյալագիտական լեզվաբանության, նաև ԱՐԵՎԱԿ-ի (կորպուսային լեզվաբանության հայերենյան կորպուսի) ընձեռած փաստերի հիման վրա էկոլերջնարդյունքների արձանագրումն ու հաշվառումը և այլն:

Լայն առումով էկոլեզվաբանությունը զբաղվում է լեզվահասարակագիտական և բնապահպանության հարացույցում **բնության էկոլոգիա - մարդու էկոլոգիա - լեզվի էկոլոգիա** եռամիասնության փոխներգործուն շղթայի ուսումնասիրությամբ:

ՀՀ լեզվամիջավայրում ևս էկոլեզվաբանական ուսումնասիրությունները ծավալվում են դասական լեզվաղբյուրներում մատնանշված երեք դիտանկյուններով՝ **միջլեզվական, ներլեզվական, բազմալեզվյան**: Էկոլեզվաբանության շրջանակներում լեզվի դասական գործառույթների կողքին կարևորվեցին այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են՝ **ազգային ինքնության պահպանման, միասնականացնող, ազգակերտող, կրթամշակութային մարտահրավերներին դիմակայելու, նաև հասարակությանը կառավարելու, պետական քաղաքականություն վարելու** գործառույթները: 21-րդ դարում կրկին ու կրկին հաստատվում է սողմոնյան իմաստությունը. «Մահն ու կեանքը լեզուի ձեռքին է. եւ նորան սիրողը կ'ուտէ նորա պտուղը» [ԱՌԱԿԱՅ ԳԻՐՔ. ԺԸ. 21] և կամ՝ «Մի թողնիր նորան, եւ նա քեզ կ'պահէ. նորան սիրիր, եւ նա քեզ կ'պաշտպանէ» [ԱՌԱԿԱՅ ԳԻՐՔ. Դ. 6]:

Էկոլեզվաբանության հիմնաքարային հայեցակարգը «**լեզվական միջավայր**» հասկացությունն է՝ լեզվի և շրջակա միջավայրի փոխհարաբերության, բնապահպանության, բնական աղետների, հասարակական կյանքի փոփոխությունների, լեզվական բազմազանության, ազգային փոքրամասնություն-

ների լեզուների, լեզվի միջոցով աղետների և վերահաս վտանգների մասին բարձրաձայնելու և հանրությանը տեղեկացնելու, «լեզվական» անցանկալի հետևանքները, դժվարությունները հաղթահարելու և նմանատիպ այլ խնդիրների հարացույցում: Իսկ ցանկացած երկրի լեզվական միջավայրի հիմնարար հասկացությունը **լեզվամիջակ-ն է, նրանում էլ՝ կրթականը:**

Արդի հայերենը որդեգրեց նաև էկոտերմինահամակարգային միավորներ՝ ներառյալ արհեստական բանականությանը և նրա մաքրությանը վերաբերող էկոտերմիններ՝ «լեզվի իմաստաբանական առողջություն», «հաղորդակցության էկոլոգիական միջավայր», «բառի էկոլոգիա», «տեքստի էկոլոգիա», «լեզվական միջավայրի էկոլոգիական բազմազանություն», «հնդեվրոպական լեզուների էկոլոգիական բազմազանություն», «մարդաբանական և տեղանվանական ավանդույթների կորուստ», «քննադատական խոսույթ», «լեզվական էկոմիջավայր», «էկոխոսույթ», «թունավոր արհեստական բանականություն», «ընկերական արհեստական բանականություն» և այլն՝ «դրական էկոխոսույթ» / «բացասական էկոխոսույթ» հակադրությամբ:

ՀՀ լեզվամիջավայր. էկոլեզվաբանական ձեռքբերումներ: Լեզվաբանական աշխարհը անհանգստացած է այն բանից, որ աշխարհաքաղաքական իրավիճակը հանգեցրել է լեզվագործածության խտրականության՝ ձևավորելով լեզվաբանական էլիտաներ, նաև լեզվաբանական ունակությունների հիերարխիկ բաշխմանը տարբեր գերտերությունների, սոցիալական խմբերի ներկայացուցիչների միջև և այլն:

Մի կողմից՝ ՀՀ լեզվական միջավայրը «Երկիր մոլորակի լեզվամիջավայրի» հոգսերն է ուսել: Մյուս կողմից՝ համամոլորակային ահագանգերը («Մտածելու ունակությունը գողացված է տեխնոլոգիաների կողմից» և այլն) սաստկացնում են հայկական լեզվամիջավայրի լեզվատազնապաներն ու վախերը՝ «դպրոցի մեջ տրորված հայերեն», «երկատված հայերեն», ««հիբրիդային» լեզվամիավորներով լցունված գրական հայերեն», «ազգային հոգեկերտվածքի փլուզում», «նահանջող հայերեն» «հայերեն լեզվամտածողության նահանջ», «սփյուռքահայերենի սահմոկեցուցիչ նահանջ»... Համահայկական տազնապ է առաջացրել, օրինակ, UNESCO-ի այն դիտարկումը, որ **21-րդ դարի վերջին 6000 լեզուներից կմնա միայն 10 տոկոսը**. Իսկ հայերենը կմնա՝ այդ 10 տոկոսի մեջ... **Կմնա... եթե...**

Մերօրյա հայ լեզվաբանության մեջ առավել չափով համակարգվում է **լեզվի էկոլոգիա** ենթաճյուղը՝ լեզվամիավորների տեսական և գործնական նորմավորման ճանապարհով: Առանձնակի ուշադրության կենտրոնում է **խոսքի էկոլոգիան**, քանի որ **խոսքի մշակութականացման էկոլոգիական նկարագիրը**, բացի լեզվի էկոլոգիայից, ներառում է բարոյավարքային և արժեհամակարգային, հաղորդակցական (միջավայր, տեղ, ժամանակ և այլն) տարրություններ: Խոսքի էկոլոգիական բազմազանության միջավայրում նրա մաքրության աստիճանը որոշվում է «**էկոլոգիա**»-ական համախմբով՝ **շրջակա միջավայրի**

Էկոլոգիա, մտածողության Էկոլոգիա, լեզվի Էկոլոգիա, լեզվագործածության Էկոլոգիա, գեղագիտական Էկոլոգիա, թարգմանության Էկոլոգիա, հաղորդակցության Էկոլոգիա, բարոյավարքային Էկոլոգիա և այլն՝ լեզվի և խոսքի գնահատման չափասանողակում միայն վերջերս առանձնացված **Էկոլոգիական / ոչ Էկոլոգիական** գնահատմանը համապատասխան: Ըստ որում՝ լեզվի Էկոլոգիական-Էկոխոսոյային գնահատման չափանիշները տարբերակված են՝ սկսած **լեզվական միավորների վերլուծությունից** մինչև **մտածողության, բանականության քննական-քննադատական վերլուծությունը**:

«Էկոլեզվաբանություն» եզրույթն արդեն արձանագրված է **Լ. Խաչատրյանի** բառարանում. «Լեզվաբանական ուղղություն, որ ուսումնասիրում է տարաբնույթ հարցեր՝ կապված լեզվական իրադրության, լեզվական միջավայրի, լեզվաքաղաքականության, խոսքի մշակույթի, խոսքի գեղագիտության, լեզվական նորմայի շարժունության, Էկոլոգիական և շրջակա միջավայրի խնդիրների հնարավոր լուծումների բնագավառում լեզվի դերի և այլ խնդիրների հետ: Լեզվաբանական այս ուղղության հետաքրքրության շրջանակներում են լեզվի պահպանության և հոգածության հարցերը՝ որպես հաղորդակցության հիմնական միջոց, որպես մարդկային հասարակության կեցության գլխավոր պայման: ԷԼ նպատակն է ցույց տալ, թե արդյոք լեզվաբանությունը կարող է կիրառվել բնապահպանության առանցքային խնդիրները լուծելիս, ինչպիսին է, օրինակ, կլիմայական փոփոխության պատճառով կենսաբազմազանության կորուստը, որն էլ սպառնում է լեզվի գոյությանը: ԷԼ ուսումնասիրությունները գործնականում երկու ուղղությամբ են ընթանում՝ **քննադատական խոսույթի** և **լեզվի Էկոլոգիայի**: Քննադատական խոսույթի ուսումնասիրությունը շրջակա միջավայրի, Էկոլոգիային առնչվող տեքստերի լեզվական քննությունն է: Լեզվի Էկոլոգիան զբաղվում է բնապահպանության, բնական աղետների, հասարակական կյանքի փոփոխությունների, լեզվական բազմազանության, ազգային փոքրամասնությունների լեզուների հարցերի ուսումնասիրությամբ և այլն: Ըստ ԷԼ մշակած նոր հայեցակարգի՝ լեզուն դիտարկվում է որպես մեծ Էկոհամակարգի բաղադրիչ, հետևաբար լեզվական ուսումնասիրությունները պետք է ձգտեն նպաստել և ծառայել նաև բնապահպանական խնդիրների լուծմանը»⁴:

Լ. Մարգարյանը այս գիտաճյուղի բերած նորույթը համարում է միջավայրի ու լեզվի փոխհարաբերության հարցը՝ լեզվի վրա ազդող գործոնների և դրանց ազդեցությունների համատեքստում: Ըստ օտարալեզու աղբյուրների՝ Էկոլեզվաբանություն զարգացման 2 տարբեր ուղղությունների՝ **Էկոլոգիական լեզվաբանություն** և **լեզվային Էկոլոգիայի** մասին խոսելիս կարևորվում է «քերականական / բառական սանդղակում» միջլեզվային տեղաշարժերի միջև գոյություն ունեցող լեզվական «**հարմարակման**» սկզբունքը («լեզվահանդուր-

⁴ **Խաչատրյան Լ.**, Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Եր., 2021, էջ 325:

ժողականություն» և «պուրիզմ»), տերմինահամակարգում ներմուծում է «**լեզվատոլերանսություն**» նորաբանությունը⁵:

Ն. Հարությունյանը էկոլեզվաբանության էությունը Երկիր մոլորակի վրա բազմազանության պահպանման կենսամշակութային մոտեցում է համարում, ներառյալ լեզվաբանական բազմազանությունը⁶:

Մ. Սարգսյանը էկոլեզվաբանության՝ լեզվի ուսումնասիրության նոր հայեցակարգի հիմքում դնում է լեզվի էկոկենոտոն բնույթի պահպանման խնդիրը և այլն⁷:

Բազմալեզվության զարգացման քաղաքականության շրջանակներում հայերենի գերակա դերն ապահովելու անհրաժեշտության և Արևմուտքի մարտահրավերներին պատրաստ լինելու հարցերն է քննել **Լ. Միրզոյանը**⁸:

Արևմտահայերենի և արևելահայերենի լեզվական միջավայրերի և լեզվավիճակային էկոխնդիրներին են անդրադարձել **Պ. Բեդիրյանը**⁹, **Դ. Գյուրջինյանը**, **Յու. Ավետիսյանը**, **Հ. Զաքարյանը**, **Զ. Աղաջանյանը**¹⁰, **Մ. Սարգսյանը**¹¹ և այլք:

Հայերենի՝, թե՛ հայության խնդիրներ. էկոլեզվաբանությունը Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության և լեզվաշինության հիմքում: Աշխարհաքաղաքականության գործընթացում փոխշահավետ և կայուն հարաբերությունների հաստատման, աշխարհի վերափոխման և գերտերություններին ծառայելու գործիքաշարի վերածված նորագույն տեխնոլոգիաների սրընթաց գրոհման, համացանցի համընդհանուր ներդրման, մարդու՝ ի՛նքն իր նկատմամբ և բնության նկատմամբ ի՛ր անգործությունը հաղթահարելու բուռն ցանկության մարտահրավերները կենսական անհրաժեշտություն են դարձրել **քաղաքականության մեջ լեզվաքաղաքականության պետական կարգավորման** հարցը: Խաչմերուկային այս հարթակում չափազանց կարևոր է դառնում քաղաքական փոփոխությունների, տարածաշրջանային զարգա-

⁵ Տե՛ս **Սարգսյան Լ.**, Լեզվաբանության զարգացման որոշ միտումների մասին // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, Եր., 2013, էջ 101-108:

⁶ Տե՛ս **Հարությունյան Ն.** Միջմշակութային հաղորդակցության տեսության զարգացման համառոտ պատմությունը // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, 2016, 1-2 (20), էջ 120:

⁷ Տե՛ս **Սարգսյան Մ.**, Էկոլեզվաբանությունը լեզվաբանության զարգացման նորագույն ուղղություն // Լեզու և լեզվաբանություն, 2017, հ. 2, էջ 57-58:

⁸ Տե՛ս **Միրզոյան Լ.**, ՀՀ լեզվական պետական քաղաքականության և Արևմուտքի բազմալեզվության փոխառնչությունները (Արդի հայերենի հիմնախնդիրներ), Եր., 2016, էջ 103-107:

⁹ Տե՛ս **Բեդիրյան Պ.**, Հայերենագիտական հոդվածներ ու նոթեր («Արևելահայերենն ու արևմտահայերենն այսօր»), Եր., 2012, էջ 95-100:

¹⁰ Տե՛ս Արդի հայերենի հիմնախնդիրներ (Միջազգային գիտաժողովի նյութեր), Եր., 2016: **ա. Ավետիսյան Յու.**, Կանոնարկումը որպես լեզվաքաղաքականություն, էջ 39-45: **բ. Զաքարյան Հ.**, ՀՀ լեզվավիճակը: Ձեռքբերումներ, բացեր և հետընթաց, էջ 83-91: **գ. Աղաջանյան Զ.**, Լեզվի նորմավորման սկզբունքները, էջ 29-38:

¹¹ Տե՛ս **Սարգսյան Մ., Բայրամյան Մ.**, Հայերենը որպես սփյուռքի լեզու. Մարտահրավերներ և խնդիրներ // Լեզու և լեզվաբանություն, 2024, 1, էջ 81-92:

ցումների, հայկական Միությունի գոյության պայմաններում միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան ներկայացնել հազարամյա հայերենի լեզվավիճակային պատկերը՝ իրավական պահանջ հռչակելով՝ **հարգել հայ ժողովրդի** (ի դեմս ՀՀ քաղաքացու և սփյուռքահայի) **բարձրագույն արժեքները, ազգային մշակույթի և արժեհամակարգային բաղադրիչները** (լեզու, պատմություն, ազգային հիշողություն, հավատ, սովորույթ...), **ազգագուտ և ազգաշահ լուծումներ տալ նորօրյա խնդիրներին** և այլն:

Ե՛վ լեզվաքաղաքականությունը, և՛ էկոլեզվաբանությունը պատմական հասկացություններ են: Նորոգությանն ու բարեշրջությանը զուգընթաց՝ փոխվում, փոփոխվում են լեզվաքաղաքականության նպատակների և խնդիրների համախումբը, բովանդակային կառուցվածքը, բաղադրիչներն ու ծավալիչները: Այն պետք է կարողանա ժամանակին արձագանքել լեզվամիջավայրում տեղի ունեցած-ունեցող փոփոխություններին՝ փնտրելով պատասխանը «հարցերի հարցի»՝ **լեզվակոլոգիական ճգնաժամը կարո՞ղ է տանել-հասցնել ազգային աղետի՝ ազգային լեզվի մահացման՝ աղետաբեր հետևանքով՝ «Խլեք ժողովրդից լեզուն, նա կմեռնի»:**

Պետական լեզվաքաղաքականությունը լեզվի բնագավառում պետական միջոցառումների ամբողջություն է՝ ուղղված պետական լեզվի շահերի պաշտպանությանը, բոլոր ոլորտներում պետական լեզվի կենսագործունեության ապահովմանն ու զարգացմանը: Պետական լեզվական քաղաքականության հիմնական ուղղություններին և հայոց լեզվի նկատմամբ պետական վերաբերմունքի դրսևորումներին անդրադարձել է Դ. Գյուրջինյանը. գիտականորեն սահմանելով «լեզվաքաղաքականություն» տերմինը՝ մտահոգիչ եզրահանգում է կատարում. «...լեզվի վտանգվածության և ազգային ինքնության ճգնաժամի միջև ուղղակի կապ պետք է տեսնել»¹²:

ՀՀ լեզվամիջավայրում լեզվաքաղաքականության գիտական կազմակերպման նպատակով էկոլեզվաբանական աշխատանքներն անհրաժեշտաբար պետք է ուղղորդել հայերենի պետաիրավական ամրակայմանը, նրա գերակայության հաստատմանը, խոսքային գործունեության կարգավորմանն ու կանոնավորմանը, բոլոր ոլորտներում մայրենիի կենսագործունեության ապահովմանը, ազգային լեզվական ժառանգության պահպանմանը, բազմամշակութային հասարակության մեջ միջլեզվային և միջմշակութային հաղորդակցման ապահովմանը: **Ինքնուրույն լեզվաքաղաքականություն վարելու իրավունքի նվաճումը ձեռք է բերվում գիտական լեզվաշինության և էկոլեզվաշինության, ազգային լեզվամտածողության ձևավորման, տեսական-գործնա-**

¹² Գյուրջինյան Դ., «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և պետական լեզվական քաղաքականության հիմնական ուղղությունները / Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականությունը և լեզուների դասավանդման արդի հիմնահարցերը. Հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2024, էջ 17:

կան, ուսումնական, դաստիարակչական խնդիրների վերհանման և քաղաքակիրթ լուծումների առաջադրման, հայերենի գերակայության կարգավորման, հայերենի և հայախոսների իրավունքների պաշտպանության քուրա-յում:

ՀՀ-ն, ի ձույլ Եվրախորհրդի առաջադրած լեզվաքաղաքական սկզբունքներին (պահպանել, զարգացնել լեզվական ժառանգությունը և եվրոպական մշակույթի բազմազանությունը՝ հարգելով յուրաքանչյուր ազգի արժանապատվությունն ու ինքնիշխանությունը, լեզուն ու կրոնը, զգացմունքները ու սովորույթները...), սահմանել է իր ազգային լեզվաքաղաքականության կանոնները. պաշտոնական գրագրությունների հայերենացում, դպրոցում և բուհում լեզվի ուսուցման մակարդակի բարձրացում, այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմամշակութային արժեքների պահպանում, պայքար լեզվի ապագգայնացման, լեզվական նիհիլիզմի դեմ և այլն:

Հայերենի զարգացման արդի փուլում Էկոլեզվաբանության հիմնական խնդիրները ձևավորվում են ըստ ՀՀ լեզվաքաղաքականության հիմնարար դրույթների, որոնք ամրակալված են Սահմանադրությամբ¹³: Տեսական առումով սահմանադրական ամրակայումները գերքաղաքակիրթ են, սակայն գործնականորեն «կաղում են»։ Լեզվաքաղաքական և լեզվաշինական աշխատանքները չեն ապահովում դրանց գործառական ճշտությունը, անջրպետ կատեսական լեզվաքաղաքականության և գործնական լեզվաքաղաքականության միջև. սա ՀՀ լեզվաքաղաքականության գերխնդիրն է:

Լեզվաքաղաքականության և լեզվաշինության դիտանկյունից Էկոլեզվաբանության խնդիրների համակարգը եռաստիճան է՝ Ա. Ի մի բերել, հավաքել այն ամենը, որտեղ կաղում են լեզվաքաղաքական օրենքներն ու լեզվական նորմը, առաջընթացների և բարեշրջումների կողքին նշել թերացումները, բացթողումները, ետընթացները և դրանք լեզվաշինության առանցքային խնդիրներ դարձնել: Բ. Ժամանակի տվյալ կտրվածքում ամփոփել ազգօգուտ և լեզվօգուտ գիտական լեզվաշինության արդյունքները և դրանք ծառայեցնել ՀՀ-ում Էկոլեզվաքաղաքականություն իրականացնելուն: Գ. ՀՀ ակադեմիական լեզվաքաղաքականությունը վերածել ՀՀ պետական արտաքին և ներքին քաղաքականությունը կանոնակարգող գործիքի:

Էկոլեզվաբանության գիտաճանաչողական խնդիրներից մեկը լեզվաքաղաքականության գնահատման գործիքակազմի մշակումն է: Դրականը, ձեռքբերումը, առաջընթացը, բարեշրջումը գնահատելուն զուգընթաց Էկոլեզվաբանության արդյունավետությունը չափվում է լեզվաքաղաքական և լեզվագործածական սխալների, լեզվաշինության մեջ թույլ տված ձախողումների, անհաջողությունների, հետընթացների և վայրընթացների, լեզվական անկումների և նահանջի արձանագրմամբ, դրանց ծագման, սնուցման աղբյուր-

¹³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), 2015, էջ 12 (Հոդված 3), էջ 14-15 (Հոդվածներ՝ 15, 19, 20):

ների վերացման ուղիների մատնանշմամբ, լեզվական անցանկալի երևույթների ամենամեծ խողովակի՝ թարգմանական արտադրանքի «հայերենացմամբ» և այլն: Էկոլեզվաբանական դիտանկյունից առավել վտանգաշատ են ազգային լեզվամտածողության վրա աննկատելիորեն՝ կաթիլ առ կաթիլ ազդող օտարամուտ կամ օտարածին տարրերը. այս առումով **Էկոլեզվաբանությունը նաև հայապահպանության խնդիրներ է լուծում**, և թիրախային շահառուն հայ լեզվակիրն է: Էկոլեզվաբանությունն այսօրվանդակ իրողությունները ներկայացնում է աշխատանքային տարբեր գործիքներով՝ լեզվական սխալների ամփոփագրերով, հողվածներով, հաղորդաշարերով, հորդորակներով, զանազան գրություններով: Վերջին շրջանում հասանելի է դարձել լեզվական աշխատանքների մաքրման, վերահսկման և գնահատման յուրատեսակ մի գործիք՝ անտիպլագիատ Turnitin Similarity գործիքը, որի հիմնական գործառնությունը ակադեմիական ազնվության ապահովումն է՝ բացառման ռազմավարությամբ:

2.2 Էկոլեզվաբանական հոգսեր.

Ա. Լեզվագոյաբանական օրենք է՝ **ցանկացած լեզվի ուժն ու գորությունը ամենից առաջ պայմանավորված են նրանով խոսողների թվի շատությամբ**: Օրենքի բացառումն են դառնում փոքր ազգերը: Ըստ վերջիններիս համար սահմանված գոյաբանական օրենքի՝ հայ ժողովուրդը դարեր շարունակ իր ձեռքում է պահում և պե՛տք է պահի գորեղացման **երկրորդ** գործիքը (ազգային դիմագծի և **հոգեկերտվածքի պահպանում, ազգաշահ և ազգօգուտ քաղաքականություն և լեզվաքաղաքականություն** և այլն):

Բ. Հինաշխարհյան մտածողության համաձայն՝ «Եւ բոլոր երկիրը մէկ լեզու եւ մէկ խօսուածք էր» [Մննդոց. ԺԱ. 1], և բազմալեզվությունը պատիժ համարվեց մարդկության համար: Այսօր աշխարհը իբր թե գնում է այդ անեծքից ազատվելու ճանապարհով: Ոչ վաղ անցյալում լեզվաբանների գերակշռող մասի կարծիքով՝ «Լեզուների զարգացման առաջիկա հանգրվանը համազգային միասնական լեզվի հանգրվանն է»¹⁴: Մերօրյա մտածողության համաձայն՝ հանգրվանը երկլեզվությունն է՝ «ազգային լեզու և համամոլորակային մէկ լեզու» համագոյակցական բանաձևմամբ: Բայց սա **Մեծն Ժամանակի** տիրույթում է, և այս ճանապարհի հարթումն ու համահարթումը նորագույն գիտաճյուղերից մեկի՝ **լեզվապագայաբանության** խնդիրներից են: Առայժմ բազմալեզվյան աշխարհում լեզուների իմացությունը լավագույն ոլորտն է միջմշակութային շփման համար: Երկլեզվության, բազմալեզվության զարգացման ճիշտ քաղաքականության գործընթացը 21-րդ դարում անհրաժեշտություն է, սակայն բոլոր ազգերի համար մի ընդհանուր նախապայմանով՝ **լեզուների իմացությունը պետք է ծառայեցնել սեփական արժեքները գնահատելու, համաշխարհային հոգևոր մշակույթին առնչվելու, ազգայինը և համամարդկայինը ներդաշնակ զարգաց-**

¹⁴ **Մնակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց (վերահրատարակություն), Եր., 2009, էջ 23:

նելու նպատակին: Այս հարցում ոչ գիտական լեզվաքաղաքականությունը կարող է հանգեցնել անցանկալի արդյունքների, իսկ ճիշտ լեզվաքաղաքականությունը թելադրում է ոչ թե օտար լեզուների մերժում (կամ լեզվի մյուս գոյաձևերի բռնի վերացում), այլ **դրանցից անկախ գրական լեզվի կատարյալ իմացության ապահովում:** Հայ լեզվակրի (և ոչ միայն հայ) կողմից երկրորդ (երրորդ, չորրորդ...) լեզվի իմացությունը տարաշխարհիկ գիտելիքների կուտակման, համաշխարհային մշակութային արժեքների ճանաչման աղբյուր է դառնում և այլն: Բնականաբար, հայկական լեզվամիջավայրում ևս լուծում պահանջող կարևոր հարցեր են՝ **ա. ազգային արժեքների մշակութականացումը, բ. տարբեր հանրությունների միջմշակութային հաղորդակցումը (երկխոսությունը), գ. լեզվամշակութաբանական հիմնական հասկացությունների՝ լեզվից լեզու փոխանցման կանոնակարգումը, դ. օտար մշակութային արժեքների յուրացման և տիրապետման գործընթացի կարգավորումը** և այլն: Այս դեպքում կարևոր է դառնում նաև խաչաձևվող լեզվամշակույթների այն գործիքների ուսումնասիրությունը, որոնք դեպի իրենց «են ձգում» օտար մշակութային արժեքները:

Գ. Աշխարհում լեզվական բազմազանության կրճատման վտանգի թելադրանքով Էկոլեզվաբանության զգուշացումներից մեկը վերաբերում է լեզվախառնությանը: Ժամանակակից հայերենին սպառնացող վտանգը առավելապես անչափ ու անկշռույթ, շինծու փոխառություններն են: Փոխառում ենք՝ մի դեպքում պարզապես հայերեն համարժեքը չունենալու պատճառով, մյուս դեպքում՝ հայերեն համարժեքը չիմանալով կամ անտեսելով ու ստորադասելով, երրորդ դեպքում՝ օտարն իրավացիորեն գերադասում ենք գոյություն ունեցող իմաստախեղ կամ իմաստագուրկ հայերեն «համարժեքից»: Էկոլեզվաբանական խնդիրների շարքում փոխառությունների խնդիրն այսօր նաև քաղաքական վտանգավոր երանգ ունի. փոխառության չվերահսկված, պետականորեն չկարգաբերված գործընթացը կարող է հասցնել **«լեզվի փոխառության»:** Մերօրյա կյանքում երբեմն պարտադրվում է այս կամ այն «գերլեզվին» առաջնություն տալ, գործնական կամ գործառական նպատակներով «փոխառել» օտար լեզուն. այս դեպքում «մեղքը» գերլեզվինը չէ. մենք ինքներս ենք աննկատելիորեն նեղացնում ազգային մտածողության սահմանները և կարող ենք հայտնվել լեզվի փոխառության գործընթացում՝ «սպիտակ ջարդ»-ին ընդառաջ: ՀՀ պահպանիչ լեզվաքաղաքականությունն ամենից առաջ պետք է նպատակաուղղված լինի փոխառությունների գիտական վերահսկմանը:

Դ. Հայ Էկոլեզվաբանության առանցքային հարցերից մեկը Էկոթարգմանությունն է կամ թարգմանության Էկոլոգիան, որը ձևավորվել է **Էկոլեզվաբանություն, թարգմանության պատմություն, թարգմանական լեզվաբանություն, գրական թարգմանության ոճաբանություն, մշակութային թարգմանություն, թարգմանության սոցիոլոգիա, թարգմանության էթիկա, ներլեզվական թարգմանություն** (գրաբարից գրական հայերեն, բարբառից գրական հայերեն, նշանային մի համակարգից մյուսը՝ տեքստից նկար, երաժշտությունից

տեքստ և այլն) գիտաճյուղերի հատման առանցքում: Թարգմանությունը ոչ միայն լեզվական գործընթաց է, այլ նաև քաղաքական ու սոցիալական շերտեր ունեցող գործունեություն: Էկոլեզվաբանական այս ենթաճյուղի գերխնդիրը սկզբնաղբյուրից էկոլոգիական տեքստի արտածումն է՝ շեշտադրված տեսական հասկացությունների (**բառային համարժեքություն, իմաստային համարժեքություն...**) գիտական գործառնությամբ, թարգմանական հնարների (**հարմարակում, բացատրություն, խտացում, կրճատում, փոխակարգություն...**) ճիշտ ընտրությամբ, ժամանակակից գործիքակազմի հմուտ օգտագործմամբ:

Ե. ՀՀ-ում էկոլեզվաբանությունը ձեռք է բերում մի նոր գործառնություն՝ ոչ միայն մաքրել, մերժել, կանխարգելել, այլ նաև սպասել և հետևել լեզվապագայաբանական զարգացումներին: Այս դեպքում անհրաժեշտ գործիք է դառնում **արհեստական բանականությունը (AI)**: Լեզվաբանական գիտությունների համակարգում **լեզվապագայաբանությունը** նպատակաուղղված է լեզվի համակարգային փոփոխությունների միտումներն արձանագրելուն և գնահատելուն, դրանց զարգացման ընթացքը հեռանկարային տիրույթում «տեսնելուն», լեզվի կենսաբանական ապագան հարաբերականորեն կանխագուշակելուն և այլն: Լեզվապագայաբանական խնդիրներից են լեզվական համակարգի տարբեր մակարդակների և նրանց միավորների զարգացման հեռանկարների վերլուծությունը, լեզվաբանական վիճակագրության և տվյալագիտության փաստերի հիման վրա ապագայի մոդելների կազմումը, լեզվի համակարգային փոփոխությունների քարտեզագրումը և այլն:

Զ. Լեզվաշինության և լեզվաքաղաքականության հիմնաքարը լեզվական նորմն է, հետևաբար կարևորվում են լեզվի տեսական և գործնական նորմավորման գործընթացի կանոնակարգումը, մասնավորապես, Էկոլոսոսությունների և դրանց քննադատական վերլուծությունների համակարգումը, նորմի շարժունության ապահովումը և այլն:

Է. Հայերենն է հայության տարբեր հատվածներին միավորող ուժը, և ՀՀ լեզվաքաղաքականության թիրախային կետերից մեկը հայկական համայնքներ ունեցող բազմաթիվ երկրների հետ ՀՀ-ի հարաբերությունների, հայերի և հայերենի միասնականացման կամ **ընկերակալության** (ընկերակալություն) հարցերի կարգավորման հիմնագործիքը լեզվական-մշակութային բաղադրիչն է: Ճակատագրի բերումով, օտարվելով «Մեկ ազգ՝ մեկ լեզու» ընդհանուր սկզբունքից, մեր «փոքր ածուխ» լեզուն տարբերություններ գոյացրեց՝ ունեցանք 2 գրական լեզու՝ **արևելահայերեն և արևմտահայերեն** («Գլխավոր պատճառը մեր պատմությունն է, մեր հայրենիքի և ժողովրդի աշխարհագրական ու քաղաքական տևական բաժանումը»¹⁵): Այսօր ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմած վտանգված լեզուների ցանկում ընդգրկված է արևմտահայերենը՝ ի հետևանք 1915 թվականի մեծագույն նախաճիրի: Հայի մեղ-

¹⁵ Բեդիրյան Պ., նշվ. աշխ., էջ 97:

քով չէ (գուցեն հայի մեղքով է), որ ունի **Սփյուռք** կամ, ումանց կարծիքով, **Սփյուռք**-ներ, և օտար միջավայրերում «Հայրենիք»-ը համայնք դարձրած, համայնքներում էլ՝ բեկորների վերածված, ապրում է չորս կամ հինգ անգամ ավելի հայություն: Այսօր «արևմտահայերեն» եզրույթը իմաստային նեղացման է ենթարկվել՝ ընդլայնելով «սփյուռքահայերեն»-ի իմաստային դաշտը՝ ի ցույց դնելով Հայրենիքից դուրս հայկական լեզվամիջավայրի հոգսաշատությունը. **տարածական անջատվածություն, հայախոս համայնքների ցրվածություն, պետական հոգածության բացակայություն, երկլեզվություն (...), լեզվաշինության գործին հետևող կենտրոնի բացակայություն, քաղաքական ուղղակի և անուղղակի սեղմումներ, ճնշումներ և ոգեճնշումներ**, նաև **ՀՀ թույլ լեզվաքաղաքականություն**¹⁶: Կանադացի գրող – հրապարակախոս Վրեժ Արմեն Արթինեանը, չստորագնահատելով հայապահպանության և հայերենապահպանության համար ի գործ դրած հերոսական ճիգերը, սփյուռքահայության հավաքական կանչն է հղում ոչ միայն Հայրենիքի և Սփյուռքի պատկան մարմիններին, այլև «Համագգային» մշակութային տարբեր կազմակերպությունների, բարեսիրական, մարդասիրական հաստատությունների՝ ահազանգելով. «Գիտե՞ք ո՞րն է, որո՞նք են այս «սփյուռքներու» հայության գործածած լեզուն, լեզուները: Արեւմտահայերէ՞նը, արեւելահայերէ՞նը, թե՞ ո՞չ մէկը, ո՞չ միւսը: Ունկնդրա՞ծ էք խօսուած խառնիճադանճ լեզուների խառնադմուկը (cacophonie)»¹⁷:

Ը. Հայերենը բարբառաշատ լեզու է, և **գրական լեզու-բարբառ** փոխհարաբերություններում էկոլեզվաբանական աշխատանքները երկսայրի են՝ «փրկել հայերենը բարբառներից», բայց և՛ «փրկել բարբառները»: Երկրորդ դեպքում էկոլեզվաբանական հոգսերի մեջ են ներառված տարածքային բարբառային քարտեզների կազմման, բարբառակիրների հետ հաղորդակցման, բարբառային բառապաշարի հավաքման ու բառարանների կազմման աշխատանքները, և պետք է նշել, որ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտական խումբը լավագույնս իրականացնում է այս խնդիրը:

ՀՀ լեզվաքաղաքականության և լեզվաշինության աշխատանքներին կցուրդվում են գրական հայերենի և նրա եկեղեցահայերենյան տարբերակի, գեղարվեստական, հրապարակախոսական, ԶԼՄ-ների լեզվի փոխհարաբերությունների կարգավորման, խոսակցական լեզվի գրականացման հարցերը: Առանձնակի ուշադրություն են պահանջում համացանցի կամ էլեկտրոնային լեզվի (**համացանցային էկոլոգիա**), մեդիայի (**մեդիա-էկոլոգիա**), հաղորդակցական (**հաղորդակցական էկոլոգիա**) էկոաշխատանքները, խորհրդանշանային համակարգերի (**«արտալեզվաբանական էկոլոգիա», «շարժումնաբանական էկոլոգիա»**) ազդեցության ուսումնասիրությունը մարդկային հասա-

¹⁶ Տե՛ս **Սարգսյան Մ., Բայրամյան Մ.**, Հայերենը որպես Սփյուռքի լեզու. մարտահրավերներ և խնդիրներ // Լեզու և լեզվաբանություն, 2024, 1, էջ 81-92:

¹⁷ **Արթինեան Վրեժ Արմեն**, Հայերենի՞, թե՞ հայության՞ հիմնախնդիրները / Արդի հայերենի հիմնախնդիրներ (Միջազգային գիտաժողովի նյութեր), Եր., 2016, էջ 47-52:

րակության սոցիալական կազմակերպման, հաղորդակցական, երկխոսությունների, ճանաչողական գործընթացների, քաղաքական ու փիլիսոփայական գաղափարախոսության, աշխարհայացքի ձևավորման վրա:

ՀՀ լեզվաքաղաքականությունը նաև **շտկումների** կարիք ունի: Այսպես՝ Դ. Գյուրջիյանն առաջին հայացքից աննշան, բայց խորքային դիտարկում է անում հին (1995) ու նոր (2015) «Սահմանադրություն»-ներում «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է» հոդվածի դիրքային տեղաշարժի (12-րդ հոդվածից՝ 20-րդ) վերաբերյալ՝ այլ երկրների համեմատությամբ (Ֆրանսիայի Սահմանադրության մեջ 2-րդ հոդվածն է, Վրաստանում՝ 8-րդ և այլն), որը կարող ենք ձևակերպել «քաղաքականություն լեզվաքաղաքականության մեջ» հասկացությամբ: Կիսելով լեզվաբանի կարծիքը՝ «այդ հոդվածի «տեղաշարժը» նրա կարևորության վրա չի ազդում», կիսում ենք և նրա «փակագծված» մտահոգությունը. «...(այնուամենայնիվ, որքան էլ փորձենք չկարևորել կամ չգերազնահատել հոդվածի դիրքը երկրի հիմնական օրենքում, այն որոշակի վերաբերմունքի ցուցիչ է)»¹⁸:

Հ. Զաքարյանը, նկատի ունենալով 2011 թ. «Լեզվի մասին» և «Կրթության մասին» օրենքներում կատարված փոփոխությունները, գրում է. «...ՀՀ-ում թույլ տրվեց օտարալեզու ավագ դպրոց հիմնել ոչ միայն ազգային փոքրամասնությունների համայնքներում: Փաստորեն, օրենքն այժմ բացառապես հայալեզու կրթություն է նախատեսում միայն նախադպրոցական հաստատություններում, կրտսեր և միջին դպրոցներում: Բայց նույնիսկ այսօրվա կիսատ-պրատ օրենքը կոպտորեն խախտվում է»¹⁹:

Լեզվաքաղաքականություն: ՀՀ լեզվաքաղաքականության տիրույթում արդարացված է հայերենի շահերի պաշտպանությանը հետամուտ պետական **լեզվաքաղաքականությունը**: Բնականաբար տեղին են վարչագործառական որոշումներն ու հրամանները՝ ընդդեմ «լեզվական մեղքի»²⁰: Այս հարցում ցանկալի կլինի հաշվի առնել միջազգային փորձը: Այսպես՝ դեռևս 1976 թ. Ֆրանսիայում ընդունվել է օրենք՝ «Ֆրանսերենի մաքրության և պահպանության մասին»: Կարելի է և՛ Ֆրանսիայի, և՛ Գերմանիայի օրինակով որոշումներ կայացնել ընդդեմ «ամերիկանիզմների», «անգլիցիզմների»²¹, «ռուսիզմների» անհարկի գործածությունների:

Լեզվական դաստիարակություն: ՀՀ լեզվաքաղաքականության թիրախային կետերից մեկը **լեզվական դաստիարակության** խնդիրն է՝ ներհյուսված էկոմտածողությանը (=մտածողության էկոլոգիա): Լեզվի կենսունակության գլխավոր աղբյուրը հանրակրթական օջախներն են:

Ոչ պակաս կարևոր է **ընտանիքի** գործոնը. «մաքրել» ընտանեկան լեզվի փոխանցման խողովակները, մշակել նրա գրականացման գործընթացը՝ հաշ-

¹⁸ Գյուրջիյան Դ., նշվ. աշխ., էջ 22:

¹⁹ Զաքարյան Հ., նշվ. աշխ., էջ 83:

²⁰ Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու - 1956-2006, Եր., 2006, էջ 298-310:

²¹ Տե՛ս Ի Բречко В. А. Теория языкознания. М., 2003. С. 317.

վի առնելով այն հանգամանքը, որ ընտանիքը՝ որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, ոչ միայն բնակչության պահպանման և վերարտադրման, այլ նաև լեզվի, ընդհանրապես մշակույթի, ազգային արժեհամակարգի ժառանգորդական փոխանցելիության հիմքն է: Եվ պատահական չէ, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետները լեզվի կենսունակության, նրա ապագան պաշտպանելու գլխավոր չափանիշ են դիտարկում ընտանեական լեզվի փոխանցումն ապահովելու պայմանների ստեղծումը:

Գեղարվեստական գրականությունը («գրականության էկոլոգիա») և **ՁՏՄ-ների** (ՁԼՄ-ների) **լեզուն** («ՁՏՄ-ների էկոլոգիա», «մեղիա-էկոլոգիա»), **համացանցն ու էլեկտրոնային, օնլայն հարթակները** («համացանցային էկոլոգիա») ևս կարող են բավարար չափով ծառայել այս նպատակին:

Եվ վերջապես, պետք է առաջ մղել **բանասիրական կրթությունը**. «**Բանասիրությունը միշտ պետք է վերին աստյան լինի**» էկոլեզվամտածողական հիշեցումով՝ «Այս լեզուին տունկը ... միշտ մշակի մը ճարտար ձեռքին կարօտ է, որ դարմանէ, ուղղէ, քշտէ եւ ազնուացնէ»²² :

Էկոլեզվաբանական անելիքները ՀՀ լեզվամիջավայրում: ՀՀ լեզվաքաղաքականության, լեզվաշինության և էկոլեզվաբանության համատեքստում փորձել ենք փոխլրացուցչության սկզբունքով ներկայացնել անելիքների համախումբը.

Ա. Հայոց լեզուն դիտարկել մեծ էկոհամակարգի մաս՝ **լեզու-մարդ, լեզու-բնություն, լեզու-լեզու, մարդ-մարդ, մարդ-բնություն** համատեքստում և ՀՀ լեզվամիջավայրում իրատեսական դարձնել **մաքուր բնություն - քաղաքակիրթ մարդ - կատարյալ լեզու** շղթայակցումը:

Բ. Համաշխարհային մշակույթի և ազգային մշակույթի զուգահեռականներում գիտականորեն բնութագրել ՀՀ և Սփյուռքի լեզվամիջավայրերի առանձնահատկությունները, ի մի բերել առկա էկոլեզվաբանական խնդիրներն ու հոգսերը և ազգօգուտ քաղաքականությամբ ամրակայել հայերենի կենսաբանական գոյության ապահովման հիմքերը:

Գ. Միջմշակութային երկխոսության (բազմախոսության) տիրույթում համակարգել թե՛ օտար մշակութային տարածքներ փոխանցվող ազգային արժեքները և թե՛ փոխառվող արժեքները՝ կանոնակարգելով այլալեզու մշակույթների յուրացման գործընթացը՝ ի նպաստ աշխարհի լեզվական քարտեզի վրա հայերենի ինքնության պահպանմանը:

Դ. Էկոլեզվաբանությունը գործառական գործիքի վերածել՝ ուղղորդված ՀՀ-ում հայերենի գերակա վիճակի կայունացմանը, լեզվաշինության, լեզվի նորմավորման և լեզվաքաղաքականության աշխատանքների գիտական կազմակերպմանը, էկոլոգիական աղետներին կամ ճգնաժամերին պատճառակցված լեզվագործածության ճգնաժամը (ճգնաժամերը) հաղթահարելուն և այլն:

²² Այտրեյան Ա., նշվ. աշխ., էջ 41:

Ե. Շտկել լեզվաքաղաքականության խնդրահարույց (կնճռոտ) կետերը, բարեփոխել հայերենի օրենսդրությունը և նվազեցնել օրենսդրականի և նրա կատարողականի միջև եղած տարբերությունները:

Զ. Համակարգել թիրախային մարտահրավերներն ու խնդիրները և դրանց գիտական հետազոտական-վերլուծական արդյունքները ծառայեցնել համաշխարհային մշակույթի համատեքստում հայոց ազգային մշակույթի, ներառյալ և լեզվամշակույթի զանազանմանը:

Է. Ուսումնասիրել շրջակա միջավայրի քննադատական խոսույթը և լեզվական քննության ենթարկել՝ Էկոխոսույթների դասակարգմամբ՝ «դիվանագիտական Էկոխոսույթ», «օրենսդրական Էկոխոսույթ» «թարգմանական Էկոխոսույթ» և այլն:

Ը. Կանոնակարգել լեզվի նորմավորման և խոսքի մշակույթի ձևավորման գործընթացները, լեզվի արժանիքների կողքին ախտորոշել նրա թույլ և «հիվանդոտ կողմերը», գտնել «սնուցման» աղբյուրները, առանձնացնել «աղտոտված» լեզվի պատճառով գիտակցության «ախտահարվածության» կնճռոտ խնդիրները՝ առաջարկելով գիտական և ազգագույն լուծումներ:

Թ. Հետևել լեզվի համակարգային փոփոխությունների ընթացքին, **հնարավորինս ճշգրտորեն կռահել և գնահատել հայերենի զարգացման միտումները ու հետևակարները միջլեզվական և ներլեզվական տիրույթներում:**

Ժ. Լեզվաքաղաքականության մեջ առանձնակի ուշադրություն դարձնել **լեզվակրթական քաղաքականությանը**²³, նրանում՝ **բազմալեզու կրթական քաղաքականությանը:** Այսինքն՝ **ա.** մշակել հանրակրթական բարեշրջումների լոգարիթմային քայլաշար. կազմակերպել Էլեկտրոնային հայալեզու դասընթացներ. ստեղծել հայերենի ուսուցման տպագիր և էլեկտրոնային ձեռնարկներ, թվային հավաքածուներ, ապահովել հայերենի պատշաճ գործածությունը առցանց հարթակներում, թվային տիրույթում, մեդիա-խոսույթում և այլն. **բ.** կազմակերպել օտար լեզուների համաչափ բաշխումն ու ուսուցումը. **գ.** մշակել լեզվաքաղաքականությունը կանոնակարգող և վերահսկող Էկոլեզվաբանական գործիքակազմ, ստեղծել ուսուցման կառավարման և արձագանքման համակարգեր, արհեստական բանականության (AI) գործիքները ծառայեցնել հայերենը կատարելագործելու, Սփյուռքում հայերենի կարգավիճակը բարձրացնելու և օտար լեզուների տիրապետելու համար. **դ.** թարգմանական դասընթացների մշակում, թարգմանական տվյալների բազայի ստեղծում և այլն:

ԺԱ. Ակտիվացնել աշխույժ և բազմաթիրախ լեզվաքարոզչությունը:

ԺԲ. Անդամակցել միջազգային կազմակերպություններին, ձևավորել «Էկոլեզվաբանության հայկական խորհուրդ» կամ «Լեզվի իրավունքների պաշտ-

²³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ. ազգային զեկույց», Եր., 2008:

պանի գրասենյակ», նաև՝ «լեզվաշտապոգնության հասարակական ծառայություն(ներ)» համացանցային տեղեկատվական հարթակներ և այլն:

АНАИТ АДИЛХАНЫЯН, ЗАРИК АГАДЖАНЫЯН – Эколингвистические проблемы в языковой среде Республики Армения. – В статье мы использовали международные достижения эколингвистики (также лингвистической футурологии) и попытались в соответствии с международными стандартами представить языковые среды Республики Армения и Диаспоры, как компонент экосистемы **человек - природа – язык**. Мы стремились представить особенности и «озабоченности» армянского языка цивилизованному миру в контексте «проблем армянского языка или армянства?».

При написании статьи в качестве отправной точки мы выбрали проблемные языковые реалии с функциональными трудностями, проанализировали внешние и внутренние факторы, негативно влияющие на национальную среду, процесс культурализации речи, политические и социально опасные слои, зафиксировали эко-конечные результаты.

В результате нашего исследования мы пришли к выводу, что функциональная сфера армянского языка в языковой среде Республики Армения расширилась, и сегодня степень чистоты и сохранности армянского языка определяется комплексом «эко». Итоговый девиз заключается в том, что одним из основных инструментов регулирования отношений Республики Армения с внешним миром и многочисленными странами с армянскими общинами является лингвокультурный компонент.

Ключевые слова: экосистема человек-природа-язык, языковая среда РА, эколингвистическое мышление, экоречь, многоязычие, межкультурный диалог, социолингвистика, критический дискурс, эколингвистические проблемы, языковые переменные

ANAHIT ADILKHANYAN, ZARIK AGHAJANYAN – Ecolinguistic Spirits in the Language Environment of the Republic of Armenia. – In the article, we have used the international achievements of ecolinguistics (also linguistic futurology) and have tried to comprehensively and in accordance with international standards present the language environments of the Republic of Armenia and the Diaspora as a component of the **human - nature - language** ecosystem. We aimed to present the peculiarities and “concerns” of the Armenian language to the civilized world in the context of “problems of the Armenian language or Armenianness?”.

During the writing of the article, as a starting point, we chose problematic linguistic realities with functional difficulties, analyzed the external and internal factors negatively affecting the national environment, the process of culturalization of speech, political and social dangerous layers, and recorded eco-end results.

As a result of our study, we came to the conclusion that the functional scope of Armenian in the language environment of the Republic of Armenia has expanded, and today the degree of purity and preservation of Armenian is determined by the “eco” complex. The final motto is that one of the main tools for regulating the relations of the Republic of Armenia with the outside world and numerous countries with Armenian communities is the linguistic-cultural component.

Key words: man-nature-language ecosystem, RA linguistic environment, ecolinguistic thinking, ecospeech, multilingualism, intercultural dialogue, sociolinguistics, critical discourse, ecolinguistic concerns, language variables

References

- Adilkhanyan A., Aghajanyan Z. (2025): Ekolezvanut'yuny gitakan lezvashinut'yan yev azgashah lezvakh'aghak'akanut'yan himk'um, Banber Yerevani hamalsarani. Banasirut'yun. №2, ej 52-63 (in Armenian).
- Ardi hayereni himnakhndirner (Mijazgayin gitazhoghovi nyut'er) (2016): Yerevan (in Armenian).
- Aytynyan A. (1987): K'nnakan k'erakanut'yun ashkharhabar kam ardi hayeren lezvi, Yerevan (in Armenian).
- Bediryan P. (2012): Hayerenagitakan hodvatsner u not'er, Yerevan, 2012, 100 ej (in Armenian).
- Grečko V. A. (2003). Teoriâ âzykoznaniâ. Moskva, S. 317 (in Russian).
- Gyurjinyan D. (2024): «Lezvi masin» Hayastani Hanrapetut'yan orenk'y yev petakan lezvakh'aghak'akanut'yan himnakan ughghut'yunnery. (Hayastani Hanrapetut'yan lezvakan k'aghak'akanut'yuny yev lezunerî dasavandman ardi himnaharts'er (Hanrapetakan gitazhoghovi nyut'er), Yerevan, ej 16-34 (in Armenian).
- Harut'yunyan N. (2016): Mijmshakut'ayin haghordakts'ut'yan tesut'yan zargats'man hamarrot patmut'yuny, Otâr lezunery bardzraguyn dprots'um, №1-2 (20), Hayastan, ej 111-126 (in Armenian).
- Hayastani Hanrapetut'yan lezvakt'akan k'aghak'akanut'yan urvagits. Azgayin zekuyts'. (2008): Yerevan (in Armenian).
- Sargsyan L. (2013): Lezvanut'yan zargats'man vorosh mitumneri masin, Otâr lezunery bardzraguyn dprots'um (Gitakan ashkhatut'yunneri zhoghovatsu), Yerevan, ej 101-108 (in Armenian).
- Sargsyan M. (2017): Ekolezvanut'yuny lezvanut'yan zargats'man noraguyn ughghut'yun, Lezu yev lezvanut'yun, №2, Ye., ej 57-58 (in Armenian).
- Sargsyan M., Bayramyan S. (2024). Hayereny vorpes sp'yurk'i lezu. Martahraverner yev khndirner, Lezu yev lezvanut'yun, 2024, №1, ej 81-92 (in Armenian).
- Yeghiazaryan G. (2004): Yevropayi khorhrdi zhamanakakits' lezunerî yevropakan kentroni lezvakh'aghak'akanut'yuny, Banber V. Bryusuvi anvan petakan hamalsarani, №1(68), Yerevan, ej 248-261 (in Armenian).
- Yevrakhorhrdi lezvakh'aghak'anut'yuny: Zhamanakakits' lezunerî usuts'man u dasavandman veraberyal p'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu. (2001), Yerevan (in Armenian).